

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱԻԱՔ
HAMAZKAYIN FORUM 2016

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL & CULTURAL SOCIETY



2016

Forum
Հաւաք

ԼՐԱՏՈՒ



WWW.HAMAZKAYIN.COM



HAMAZKAYIN FORUM



HAMAZKAYIN_FORUM

Ֆորումի Անմոռանալի Յուշերեն



2016-ի ֆորումը սկիզբ առավ Յուլիսի 16-ին: Երբ օդանաւը վայրէջք կատարեց Զայաստանի «Չուարթնոց» օդանաւակայանում, ոտքս դրեցի հայրենեաց հողի վրայ, սիրտս սկսեց արագ բաբախել: Դա սկիզբն էր այն հրաշալի պատմութեան որ սպասում էր մեզ: Չէի պատկերացնի, որ այսքան փոքր ժամանակահատուածում տարբեր երկրներից եկած հայ երիտասարդներ այսքան կը մտերմանան ու կը կազմեն մի ընտա-

րիչ էր: Մենք այցելեցինք Ծաղկածորի Տիրամայր Զայաստանի ճամբարը եւ մեր օրը անցկացրեցինք հրաշալի երեխաների հետ: Ինձ շատ յուզեց այն փաստը որ շատերը ծնողագուրկ էին, ոմանք վատ պայմանների մէջ էին ապրում ու լքուած

էին իրենց հարազատների կողմից: Սակայն նրանք մեզ գրկաբաց ընդունեցին: Նրանց ժպիտն ու փայլուն աչքերը մինչեւ հիմա մտքիս մէջ են: Այցի աւարտին, մեր սեփական նախաձեռնութեամբ նիւթական օգնութիւն ցուցաբերեցինք այդ հրաշալի երեխաների պատասխանատուին: Ֆորումի վերջին օրերը մենք գնացինք Արցախ: Իմ երագանքը վերջապէս իրականացաւ: Ինձ գերեց Գանձասարի գեղեցկութիւնը եւ այդ կախարդական պատկերը մինչեւ օրս մէջս է: Տիրում եմ որ վերջացան այս հրաշալի օրերը ու դարձան յուշեր, սակայն պի-



տի վերադառնալ հարուստ տպաւորութիւններով, տանելով ինձ հետ Զայաստանի սերն ու հմայքը, վերադառնալու ակնկալիքով:

Նիք: Զամագգայինի Ուսանողական Զաւաքի շնորհիւ մենք երկու շաբաթուան ընթացքում հասցրեցինք լինել Զայաստանի գրեթէ բոլոր տեսարժան վայրերում, մօտիկից ծանօթանալ հայ մշակոյթին, ինչպէս նաեւ հայոց պատմութեանը: Գրեթէ ամէն օր մենք լսեցինք դասախօսութիւններ եւ այցելեցինք բազմաթիւ թանգարաններ:

Ինձ շատ դիր եկաւ «Ո՞վ է հայը» թեմայով դասախօսական զրոյցը: Իւրայատուկ զրոյց էր, ուր մասնակիցները արտայայտուեցին ու փոխանցեցին տարբեր կարծիքներ: Ինչ վերաբերում է տեսարժան վայրերին, ես ուղղակի հիացած եմ, հիացած եմ հայկական լեռնաշխարհի գեղեցկութեամբ եւ հայկական հին եկեղեցիների ճարտարապետութեամբ: Նոյնիսկ չկարողացայ զսպել իմ յուզմունքը, երբ գնացինք հայոց ցեղասպանութեան յուշարձան՝ Ծիծեռնակաբերդ: Չոհերի պատկերները անցնում էին աչքերիս առջեւ, մարմնիս մէջ սարսուռ անցաւ եւ այդպէս այդ օրը դրոշմուեց հոգիս մէջ: Այդ օրը բացառիկ օր էր, սակայն 7րդ օրը անելի տպաւո-

Անճելիքա Ներսիսեան Ֆրանսա (Մարսէյ)



Հաճելի եւ Ուսանելի 15 Օրերը

"Մի՛ գնա մի քիչ եւս մնա"՝ այս բառերով բաժնուեցանք այն անմեղ մանուկներից: Խօսքս մանկատան մանուկների մասին է, որ ինձի համար ամենայու-



սարժան վայրեր, որոնք հարստացուցին մեր գիտելիքները, այցելեցինք՝ վանքեր, թանգարաններ եւ համալսարաններ, իսկ գիշերները վայելեցինք Երեւանի անսման ճամբաները:

Մեծ շնորհակալութիւն կը յայտնեմ Համազգայինի ֆորումին, որուն միջոցաւ կրցայ ծանօթանալ տարբեր երկիրներէ սփիւռքահայերու եւ ճանչցայ իմ հայրենիքս աւելի մօտէն: Անշուշտ այս բոլորը եղաւ շնորհիւ այս հրաշալի կազմակերպութեան՝ Համազգայինին եւ պատասխանատուներուն:



Աբօ Ճոնտերեան Սուրիա (Դամասկոս)

Խաները Գիւմրիի, Արցախի եւ Զաւախքի որբ եւ նիւթական դժուար պայմաններու մէջ ապրող փոքրեր էին, որոնք ժամանակաւոր եկած էին եւ կը մնային իրենց յատկացուած շէնքին մէջ: Գեղեցիկ, տեսարժան վայր մըն էր, մաքուր օդ, փոքրերուն հոգ տանելով կը փորձէն ուրախացնել զանոնք: Երբ այցելեցինք, միասին ճաշեցինք, խաղացինք, պարեցինք, նկատելի էր թէ փոքրերը կարիք ունին սիրալիր եւ հոգատար մարդկանց, որոնք իրենց մասին կը մտածեն:



Ամառանալի Օր Մը

Ուրախութիւնս այդքան մեծ էր, որ չեմ կրնար բացատրել եւ արտայայտել: Բոլորովին տարբեր զգացումներ ապրեցայ երբ հասանք "Տիրամայր Հայաստանի ճամբար", ուր երեխաները Համազգային ֆորումի մասնակիցները դիմաւորեցին երգով, ծափով եւ հայկական աւանդական դիմաւորելու ձեւով՝ աղ ու հաց հրամցնելով: Երե-



Արագ Պողարեան Սուրիա (Հալէպ)

"To remember the best days of my life"

So far during the Forum, I have enjoyed many things, particularly visiting the sisters' summer camp for impoverished children. During my trip there with the group I was able to sit and meet these very kind, smart and influential children that could have the capabilities to do whatever they desire, but sadly cannot because of the poverty they live in. Particularly I met



a nine year old boy named Shant, who was an orphan and living with his grandpar-

ents outside of the camp. Shant was very intellectual, at just nine years old he carried a journal that delicately wrote in Armenian his day to day schedule and what he enjoyed in his life. When I asked him why he liked writing so much, he turned to me and said in his soft voice, "to remember the happiest days of my life". Just like Shant, many children in the summer camp are orphans. This hurt



me especially when I found out that some children cry at night and long for having a mother or a father in their lives. This moment made me realize that not only are children very innocent but that I should not take my life for granted. It is important that everyone creates the opportunity to come to these villages and help these children and make them as happy as can be because they need that love and warmth in their lives. I recommend anyone my age to attend the Hamazkayin Forum because it is a great opportunity to meet new people and get outside of your comfort zone especially if you're a shy individual. You will make friendships that will last a life time.

**Pateel Parseghian
USA**



Իմ Երազը


ՈՒՆԷ հայ ինչքան ալ գուրկ ըլլայ հայրենասիրութենէ, անպայման կ'ունենայ փափաքը իր հայրենիքը այցելելու: Եթէ ոչ իր հոգին յագեցնելու, ապա անպայման իր հայրենիքը տեսնելու եւ անոր ծանօթանալու:

Հայաստան այցելելը իմ ամենամեծ երազն էր, թերեւս ուրիշինը ըլլար շքեղ տուն ունենալը, կամ միւսինը՝ հարստութիւնը, բայց իմս՝ հաստատ այդ մէկն էր: Մայիս ամսուան սկիզբն էր քննութիւններու պատրաստութեան ճնշումին տակ, երբ հալէպը կը հրթիռակոծուէր, ստացայ երազս իրականացնելու աւետիսը, իսկ աւետաբեր աղանձին՝ Համազգայինի Սուրիոյ շրջանային վարչութիւնն էր, որ փոխանցեց թէ համազգայինի ֆորումի մասնակիցներէն մէկը ես եմ: Ուրախութիւնս անսահման էր, թերեւս աւելի քան կին մը որ երկար սպասումէ ետք զաւակ մը ունեցաւ: 74 օր սպասելէ ետք հասաւ մէկնումի օրը, մէկնումէն 4 օր առաջ իսկ պատրաստէր էի պայուսակս, չէ՞ որ առաջին անգամն էր որ պիտի այցելէի հայրենիք ու համտե-

ցամաքամասի վրայ ու մենք արդէն «Չուարթնոց»ի մէջ ենք: Առի պայուսակներս եւ ուղղուեցայ դէպի դուրս, ուր մեզ կը սպասէր վարորդը, որուն դէմքը այժմ չեմ յիշեր, որովհետեւ երկվայրկեանն անգամ չունեցայ նայելու անոր դէմքին: Դէմքս միշտ պատուհանէն դուրս, կը դիտէի աջն ու ձախը: Հասանք օթեւան, պայուսակներս դրի: Դեռ "մէկը մեզ չդիմաւորեց" մտածումը նոր սկսած էր, ձախ կողմէն մէկը ըսաւ.

- Ընկեր Զրի՞ստ :
- Այո :
- Բարի եկար :

Այո, կարճ էր խօսակցութիւնը, բայց այդ մէկը բացաւ դէմս մտածումի լայն հորիզոններ: Նախ ո՞վ էր այդ մէկը, իսկ մնացեալը մթնոլոր-



տին մասին էր, արդեօք բոլորը այսպէս մարդամօտ են: Արդեօք հաճելի պիտի անցնի՞ն այս 15 օրերը: Պիտի կրնա՞մ ունենալ նոր ընկերներ, շահիմ անոնց փորձառութիւններէն ու ծանօթանալ իրենց մտածելակերպներուն: Այս բոլոր մտածումներէն ձերբազատուելէ ետք, անցայ իմ առաջին հետաքրքրութեան: Ո՞վ էր այդ պատասխանատուն, շուտով մտայ Համազգայինի կայքէջը եւ տեսայ անոր նկարը: Փաթիլ եսայեան, անծանօթ մը, որ պիտի դառնար իմ



սէի անոր գուլալ ջուրը, շնչէի անոր մաքուր օդը եւ վայելէի այն դրախտային բնութիւնը: Երկար սպասումէ ետք հասաւ 15 Յուլիսը, թիփք դէպի Երեւան: Ժամը 23:20, օդանաւը վայրէջք կատարեց, վայրէջք մըն ալ կատարեց արեան գերճնշումս: Է՛հ ինչ գեղեցիկ զգացում, օդանաւը չկանգնած կ'ուզեմ դուռը բանալ եւ իջնել: Վերջապէս վերջ առաւ այդ զգուելի բշտը օդանաւին

ամենամօտ անձերէս մէկը, որմէ շատ բաներ սորվելիք ունէի այդ խտացուած 15 օրերուն մէջ: Յուլիս 16, Ֆորումի սկիզբ: Օրուան առաջին ժամերը ծանօթ ընկերոջս Կարոյին հետ էի, որ նոյնպէս հրճուած էր: Բոլորն ալ իրենց անուն, ազգանունը կ'ըսէն: Միևնա կս չէի որ կ'ուզէի ծանօթանալ, բոլորն ալ կ'ուզէին: Եւ այսպէս սկիզբ առաւ մեր ֆորումը: Ծանօթացայ ընկերներու

Կիպրոսեն, Ամերիկայեն, Լիբանանեն, Ջալաբեն, Արցախեն, Շուետեն, Ռուսիայեն, Ֆրանսայեն, Հայաստանեն եւ նոյնիսկ Սուրիայեն, բայց Մայրաքաղաք Դամասկոսեն, առաջինը անոր ծանօթացայ, Տոքթոր Աբրահամին՝ կոկիկ, ժամադրութիւնը յարգող եւ հեզ: Ամենադիրին ծանօթանալը իրն էր, որովհետեւ երկուքս ալ ապրէր ենք Սուրիոյ պատերազմը եւ կարծեմ առաջին նիւթերնիս ալ այդ մէկն էր: Եւ այսպէս իւրաքանչիւր մասնակիցի հետաքրքրութիւնները սերտելով, առիթը կը փնտռէի անոնց հետ ոչ միայն ծանօթանալու, այլ մտերմանալու: Կային նաեւ անձեր, որոնց ծանօթ էի, բայց՝ ոչ մօտ: Ֆորումը առիթը եւս ընծայեց անոնց հետ մտերմանալու: Ինչ կը վերաբերի ֆորումին, ծրագիրը լաւապէս մշակուած էր ինչպէս միշտ: Ինչպէս միշտ կ'ըսեմ որովհետեւ ունիմ ընկերներ, որոնք մասնակից եղեր են այս ծրագրին եւ միշտ ալ գոհ մնացեր են: Մենք այցելեցինք Դիլիջան, հաղարծին, Ամբերդ, Խոր վիրապ, Սաղմոսավանք եւ շարք մը սրբավայրեր, որոնց եթէ ոչ բոլորին, ապա մեծամասնութեան գոնէ ունեինք յատուկ դասախօսներ: Միայն միտքը զարգացնել չէր ֆորումի նպատակը, այլեւ հոգին յագեցնել, ինքնավստահութիւնը ամրապնդել եւ ընկերային շրջանակը ընդլայնել: Ազատ ժամերը ի գուր չէինք վատնէր, կամ կը հաւաքուէինք որոշ խմբակով մը հիւրանոցին մէջ, կամ ալ ֆորումի "ընդհանուր հրամանատար" ընկեր Արան կը ստեղծէր որոշ յայտագիր մը, որուն բոլորն ալ միշտ համաձայն կ'ըլլային: Ընկեր Արան, բարի հսկան, փոքրացուած այս ընտանիքի գթասիրտ հայրն էր: Բոլորն ալ կը յարգէին զայն, թերեւս որովհետեւ ինքը կը յարգէր բոլորը եւ ընկերաբար կը մօտենար անոնց: Տարիքի խտրականութիւն չկայ հոս, հազար ինը հարիւրն ու իր պատառիկները միայն թիւեր են:


Ֆորումի ընթացքին ունեցանք զարգացման մրցում, որուն պահուն ծանօթացանք իւրաքանչիւր ֆորումականի գիտելիքներուն հայ մշակոյթի ու պատմութեան մասին, ունեցանք նաեւ հետաքրքրական դասախօսութիւններ, զրոյցներ եւ բանավեճեր, որոնց մէջ կային բարձր դիրքի փրոֆեսորներ: Այս բոլորը, ինչպէս նաեւ ընկերային-հասարակական զրոյցները ըլլան անոնք

ճաշասեղանին շուրջ, մեքենային մէջ կամ հիւրանոցի լոպիեն ներս: Սակայն մեր պտոյտին ամենայատկանշականն ու անկիւնադարձայինը Արցախ հայրենիք այցելելն էր: Արցախին ծանօթեմ նկարներէն, աշխարհագրական գիրքերէն եւ Ռուբէնի «Հայ Յեղափոխականի մը Յուշերը» գիրքէն, որուն մէջ կը պատմէ Արցախի բնութիւնը այնպիսի ոճով մը, որ ընթերցողը ինքզինք այդ միջավայրին մէջ կը գգայ, սակայն այս բոլորը ուրիշ բան են եւ այդ բնութիւնը քու սեփական աչքերով վայելելը ուրիշ բան:

Հայաստանի մէջ այցելեցինք տասնեակ թանգարաններ, բայց ամենախորհրդաւորը ըստ ինծի, Արցախեան հերոսներու թանգարաններն էին, խունկ ու մոմ եւ փառք ու պատիւ այն հերոսներուն, որոնց շնորհիւ մենք կ'ապրինք այսօրուան փառքը: Որքա՞ն գեղեցիկ էր Գանձասարը իր եկեղեցիով ու բարձր դիրքով, որմէ եթէ հեռուն նայիս երկար օրուան մը տենդէ ետք, յոգնութիւնդ կը փարատի: Արցախի մէջ 3 կարճ օրերէ ետք, պատրաստուեցանք վերադար-

ձին: Հրաժեշտի պահին Է, կան խոժոռ դէմքեր ու արցունքոտ աչքեր, ֆորումականներէն մէկը արդէն ճամբեցինք մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ: Այդ մէկը Դաւիթն էր, որ պիտի երթար բանակ ծառայելու հայրենիքին, բարի ծառայութիւն մեր ֆորումականին:

Եւ այսպէս ճամբայ առաւ դէպի Հայաստան մեր ինքնաշարժը, որուն մէջ արդէն մենք ունինք անմոռանալի յիշատակներ: Ինքնաշարժին մէջ ունեինք խօսնակ եւ նկարիչ, Ալիքն ու Կալին, խոտակեր Աննան, հանդարտ Աբրահամը, Կատակասէր Սամօն, լուռ Տիանան, շատախօս Մարիետան, ընկերասէր Կարօն, իր սեփական աշխարհը ունեցող Արին, քնացող Կալիան, ժպտերես Գայեանէն, բարձրաձայն խնդուքով Անժելիքան, պզտիկ «ֆորումական»ը՝ Պետօն, ագռաւ Մայքըլը, տարօրի-





նակ խնդրե՛ք Տաուշի Դաւիթը, արաբերէն լեզուի հակում ունեցող Վաղօն, նորեկները՝ Փաթիլն ու Ռուպիկան, ինքնաշխատող Սերժը, անկեղծը՝ Մարիամը, անտարբերը՝ Մարտիկը: Ունեինք նաեւ թամատայ ու դերասան, դերասանը Արմանն էր, իսկ թամատան այս յօդուածագիրն է:

Մեր ուղիի վրայ կանգ առինք Տաթևի թեւեր, աշխարհի ամենաերկար ճոպանուղին, ուր նաեւ ճաշեցինք եւ շարունակեցինք մեր ճամբան: Ժամը 19:00 հասեր ենք Հայաստան: Վերջ, չմնաց պտոյտ, չկայ այլեւս յայտագիր, չմնաց չարաճճիութեան առիթ ու պիտի վերադառնայինք սովորական մեր կեանքին:

Ամեն մէկը ետդարձ դէպի իր երկիրը, «տաքուն փաթթուկ»ներ չորս դին, «բարի ճանապարհ»ը արձագանգի պէս կը կրկնուի: Վատ մտածումներս սին էին, որովհետեւ ֆորումը գէշ տպաւորութիւն չձգեց: Ես ունեցայ նոր ընկերներ, շահեցայ կեանքի նոր փորձառութիւն եւ նամանաւոր եւ ամենակարեւորը վերոյիշեալ հիմնական երազս իրականացաւ: Իսկ ինչ կը վերաբերի ֆորումին... Ֆորումը դարձաւ անցեալ մեր կեանքին մէջ, ներկայ մեր մտքին մէջ եւ յաւերժացած մեր սրտին մէջ: Վարձքը կատար բոլոր պատասխանատուներուն:

**Քրիստ Խրոյեան
Սուրիա (Հալէպ)**

New Understanding of Being Armenian



Days were passing by and every single day I felt more and more proud for being Armenian. Hamazkayin forum gave me the opportunity to understand myself, to know where I come from and eventually love my country, my nation and my religion.

It's not just a holiday it's not just an experience, for me it is a life

changing 2 weeks that I will always remember with love and nostalgia, not just for making friends, who became like a family but especially for changing me. I'm going back home with a different way of thinking and different way of understanding who I am, where I'm coming from and where I'm going

from now on.

I used to love Armenia from the stories that my dad and mum told me but now I have my own stories, my own perspective of what Armenia means. Finally, I love Armenia even more but now passionately, deeply and respectfully.

**Mariam Masourian
Cyprus**





Այս կեանքը ունի բազմազան գոյներ: Եւ այս գոյների մէջ ցաւօք մտնում են նաեւ գորշ գոյները, որոնք մոլախոտի պէս փաթաթում են ու հանգիստ չեն տալիս: Սակայն մարդն ուժեղ է, հայ մարդը, ով կարող է դիմանալ եւ պայքարել մինչեւ վերջ: Ինչու՞ պէտք է մեր մանուկները զգան ծնողի կարօտ, որ ամէն պատահածի այնպէս ջերմագին փաթաթուեն, ինչպէս կը գրկէին



իրենց ծնողներին: Սա է հենց կեանքի ամենագորշ գոյնը: Մի փոքրիկ մանչ, ում համար կեանքը նոր սկսուած հեքիաթ է, մի թոպէում փշուր փշուր է լինում, կործանւում: Եւ հենց այս մանուկն է, որ ուժ է գտնում իր մէջ եւ պայքարում: Նա երբեք չի կոտրուում, ընդհակառակը, միշտ առաջ է նայում: Ամառային մի արեւոտ օր քայլում էի այգում: Մի գեղեցիկ բարդու տակ տխուր, մտամոլոր մի փոքրիկ էր նստած՝ հագիլ 12: Երբ մօտեցայ, փախաւ ինձանից, բայց երբ գլուխս թեքեցի, վազելով փաթաթուեց ու ջերմագին համբուրեց: Այնպէս էր հեծկտում, կարծես նրա գտնուած երազն էր: Եւ բնաւ այն չէ կարելոր, որ նա թելաթափ եղած թռչունի նման ծուարել էր թելիս տակ: Այլ այն, որ նա սրբում էր արցունքներն ու ասում, ես կարող եմ, ես ուժեղ եմ, որովհետեւ իրաւունք չունեմ յանձնուելու, որովհետեւ ես հայ եմ, որ մի օր էլ իմ մօր թելի տակ կը ծուարեմ: Արդէն գիշեր էր: Բաւականին հեռացել էի այգուց, որտեղ հանդիպել էի փոքրիկին: Որոշեցի վերադառնալ եւ յաւերժ մնալ նրա հետ, բայց երբ գնացի, բարդու ծառի տակ գտայ միայն երկու աղաւնիներ, որոնք ինչ որ բան էին կտցահարում: Եւ հենց այս աղաւնիները ինձ յուշեցին, որ փոքրիկը գնացել է իր երազանքի հետքերով եւ համոզուած եմ, որ նա մի օր կը գտնի իր սպասուած երազը:



Տիանա Պեկլարեան Հայաստան

Իմ Հայաստանը ես եմ – իմ ընկերները:

Իմ փոքրիկ Հայաստանը մեր ձեռքերում է – մենք պարտաւոր ենք պահել պահպանել:

Միայն կապուտակ Սեւանով, եկեղեցիներով ու թանգարաններով չի սահմանափակւում այն:

Այլ հսկայ Արցախով ու նրա հոյակապ բնութեամբ:



Ես հարուստ եմ, շատ հարուստ, որ ունեմ Հայաստան, – ուրախ եմ, որ հայ եմ:

Աննա Եղոյեան Ֆրանսա

Համագգայինի Ֆորումը

Ֆորումը այնպիսի ծրագիր մըն է, որ առիթ կու տայ տարբեր երկիրներէ երիտասարդներ իրարու ծանօթանալ, մտերմանալ եւ մասնակից դառնալ հիանալի ֆորումին, որ կարող է մէկ անգամ պատահի կեանքի մէջ: Երբ ինծի առիթ վիճակուեցաւ ֆորումին մասնակցելու երկմտեցայ, մտածեցի թերեւս լաւ ժամանակ չեմ կրնար անցընել: Սակայն քոյրս գիտ խրատեց եւ համոզեց, որ մասնակցիմ: Շատ ուրախ եմ, որ լսեցի իր խրատը եւ մասնակից դարձայ 2016-ի ֆորումին, հակառակ պարագային պիտի կորսնցնէի այս հրաշալի առիթը:

Բոլորս առաջին օրէն մտերմացանք անկեղ-

ծութեամբ, քոյր-եղբոր պէս եղանք եւ ամենալաւը մէկը միւսի հետ օտարի պէս չվարուեցանք: Այս 15 օրը շատ ուրախ ժամանակ անցուցինք եւ չենք ուզեր, որ բաժնուինք: Բայց վստահ եմ, որ թէեւ Ֆորումը 15 օր է միայն, բայց բոլորս կապի մէջ պիտի մնանք եւ կեանքի ընկերներ պիտի ըլլանք: Բոլորս ալ մեծ փորձառութիւն ունեցանք:

Շնորհակալութիւն կը յայտնեմ Համագգայինին, որ մեզի առիթը ընծայեց ծանօթանալու տարբեր երկիրներէ երիտասարդներու, հիանալի ժամանակ անցընելու եւ այս հրաշալի կազմակերպուած ծրագրին համար: Համագգային միութիւնը աշխարհի չորս ծագերուն կը ծառայէ հայ ժողովուրդին: Հպարտ եմ, որ իմ մեծ հայրս հիմնադիրը եղած է Սուրիոյ մէջ Լաթաքիոյ Համագգայինին: Կը խոստանամ ես ալ ծառայել Համագգայինին, ուր որ ալ գտնուիմ:



Կալի Պապօղանեան Սուրիա



Համագգայինի Հաւաքի Այցը «Տիրամայր» Ճամբար

Յուլիսի 22 էր: Համագգայինի հաւաքի գեղեցիկ, հետաքրքրական օրերից մէկը: Սպասումներով ու ոգեւորութեամբ, առաւօտեան արթնացայ, նախաճաշեցի ընկերներս հետ: Հաւաքուեցինք մասնակիցներով ու օրակարգով սահմանուած կարգով ուղեւորուեցինք Ծաղկա-

ծոր: Երգում էինք, ուրախանում, կատակներ անում ողջ ճ ա ն ա պ ա Ր Ի ի ն : Նախօրօք ասուել էր, որ այցելելու ենք նաեւ Տիրամայր Հայաստանի ամենանգամեայ ամառային ճամբարի երեխաներին, որոնցից շատերը ծնողազուրկ են, շատերը անապա-

հով ընտանիքից, մի մասն էլ ընտանեկան բռնութեան ենթարկուած: Հասանք Ծաղկածոր, նստեցինք ճոպանուղի, նկարուեցինք, ուրախացանք: Ամէն ինչ հոյակապ էր: Վերջապէս ուղեւորուեցինք ճամբարավայր:

Իջանք հանրաշարժից: Քոյր Արուսեակը դիմաւորեց մեզ, մի քանի խօսք ու զգուշացում արեց եւ առաջ գնացինք:

Դանդաղ քայլերով մօտենում էինք ճամբարավայրին – մօտակայքում նշմարում էր շարքով կանգնած երեխաների խումբը: Ինչքան շատ էինք մօտենում, այնքան աւելի էր անորոշութիւնը հոգիս պատում: Մի անհասկանալի,



անբացատրելի զգացում էր պատել մարմինս: Սիրտս արագ էր բաբախում:

Փոքրիկները մեզ աղ ու հացով դիմաւորեցին: Յանկարծ հայեացքս խաչուեց այդ երեխաներից մէկի հայեացքին, նրա գեղեցիկ, մեծ ու զուլալ աչքերին ու անկախ իմ կամքից արցունքներս գլորուեցին: Չսպեցի ինձ, միացայ ընկերներիս, միասին երգեցինք, պարեցինք մանուկների համար: Թուում էր, թէ բոլորս ուրախ ենք, ժպտում ենք: Շատ արագ ծանօթացանք ու մտերմացանք այդ հրաշամանուկների հետ: Շատ սիրեցին մեզ: Երբ ճաշեցինք նրանց հետ ու աւելի ընկերական դարձաւ մթնոլորտը, անկեղծացան մեզ հետ, սկսեցին զրուցել, պատմել իրենց մասին: Անմիջապէս ժպիտները քարացաւ մեր դէմքերին: Բայց եւ այնպէս շարունակեցինք ժպտիլ, էլի ծիծաղում էինք, կատակներ անում: Բայց...: Ինչե՛ր զգացինք, ինչե՛ր լսեցինք: Անկարելի է, ոչ մի բառ չի կարող զգացածս արտայայտել: Ա՛խ, իմ Դաւիթ, ինչքան քեզ սիրեցի: Ձեռքս ամուր բռնել էր, վազում էր, գոռում, «նա իմ քուրիկն է», «տեսէք ես քուրիկ ունեմ, նա իմն է»: Սիրտս ճմլում էր,

փշաքաղուել էի:

Աւաղ վրայ հասաւ ամենադժուար պահը, պիտի գնայինք: Հարցնում էին մեզ թէ ո՞ւր էք գնում, գալո՞ւ էք չէ գիշերը: Մայրամիկը ասում էր, թէ իր սենեակում տեղ կայ, գնամ իր մօտ քնեմ:

Չէի ուզում բաց թողնել նրանց, ամուր գրկում էյի: Հենց մէկին բաց էի թողնում, միւսն էր դիմացս յայտնւում, իրեն էի գրկում: Չէինք ուզում գնալ, իրենք էլ չէին ուզում գնայինք:

Երբ վերջապէս հրաժեշտ տուեցինք բոլորին ու նստեցինք ավտոբուս, իմ եւ իմ ընկերների դէմքին քարացած ժպիտը փոխարինուեց մի աննկարագրելի տխրութեան. այլեւս չէինք ժպտում, լուռ էինք, թախիծ էր պատել մեզ: Այդ օրն էլ աւարտուեց, բայց չէ որ ամէն մի բանի վերջ սկիզբ է մի այլ բանի:

Ինձ համար այդ օրը անվերջ մտածմունքներին եւ խոհերին սկիզբ դրեց: Մտածմունքներ, որոնք յոյսով եմ, ուրոյն դեր են ունենալու իմ ապագայի եւ իմ մարդ տեսակի ձեւաւորման գործում: Համոզուած եմ ընկերներս էլ նոյնը զգացին:

Շնորհակալ եմ Համազգայինի հաւաքի կազմակերպիչներին, որ պարգեւեցին մեզ այդ հրաշալի ու նուիրական զգացումներ առաջացնող օրը:

**Մարիտա Պատալեան
Հայաստան**



S'enrichir De Mon Identite Armenienne

Je suis franco-arménienne, mon père est français et ma mère arménienne du Liban.

Je ne vis pas aujourd'hui dans un milieu arménien.

Sur mes dix cousins du côté arménien (tous ont un parent non arménien, français ou américain) je suis la seule qui vais tout faire pour ne pas laisser s'éteindre cette partie de moi. Je vais, et je dois, l'enrichir, en ne



restant pas ignorante de la culture, de la langue, de l'histoire. Le savoir, la connaissance sont des armes implacables. Elles peuvent venir à bout des pires ennemis, comme le montre la statue de Machots devant le Madenataran, un bras tendu vers l'alphabet, l'autre vers un aigle tenant une épée. Mon ennemi aujourd'hui c'est l'oubli. Oublier que je suis arménienne. Oublier, comme l'ont si facilement fait tous mes cousins.

Aller en Arménie constituait pour moi une étape importante sur ce fil conducteur que je poursuis depuis quelques années. Je pense que je n'aurais pas pu mieux découvrir l'Arménie qu'en participant au forum de Hamazkaïne. Je me suis retrouvée face à tout un pan de notre patrimoine culturel, que j'ai pu réellement voir, comprendre et, en ce sens, m'approprier.

J'ai conscience qu'il est difficile de vivre avec deux identités, que l'une prend souvent l'ascendant sur l'autre. Mais quand on est arménien de la diaspora, du fait de notre histoire, on a le devoir de s'accrocher à ses racines, puisque ces racines elles-mêmes n'ont plus pied dans la terre.

Pour moi, la balance est égale, je place mes deux identités sur un pied d'égalité. Mais je n'aurai vraiment atteint mon but, je pense, que quand j'aurai en quelque sorte passé le flambeau, quand mes propres enfants sauront tout de Baudelaire et de Tcharents, de Balzac et de Raffi, de Brassens et de Gomidas. Quand, en somme, ils se sentiront tout à la fois français et arméniens.



Gayane Charpin
France

Համագգայինի Աննման Ֆորումը



Այս տարի դարձած եմ մասնակից Համագգայինի ուսանողական հաւաքի: Եւ առաջին հերթին կ'ուզեմ շեշտել, որ եթէ մասնակցութեան հրաւեր չ'ըլլար, չեմ գիտեր երբ պիտի պատահէր իմ առաջին այցելութիւնը Հայաստան եւ արդեօք պիտի պատահէր: Ասիկա պարզ զբօսաշրջական այցելութիւն մը չէ, այլ բացառիկ առիթ հայրենիքին ծանօթանալու եւ ճանչնալու ինչ տեսակ ժողովուրդի գաւազն էմ:

Հայաստան հասնելէ ետք առաջին իսկ օրէն մեծ խանդավառութիւն եւ հաճոյք ապրեցայ: Ուր որ ալ երթամ, միշտ մայրենի լեզուն կը լսեմ, ինչ ալ ճաշարանի, խանութի կամ նոյնիսկ ինքնաշարժի մօտէն կ'անցնիմ, հայ երգեր կը հնչեն: Իմ սովորական ապրած վայրէն բոլորովին տարբեր պատկեր մը՝ անծանօթ, բայց հարազատ: Ամէն տեղ յուշարձաններ՝ խօսուն վկաներ մեր ժողովուրդի կտրած հազարաւոր տարիներ հաշուող պատմութեան ուղիի մը: Բայց յատուկ տպաւորութիւններ կ'ունենամ այն ատեն, երբ կ'այցելեմ մեր պատմական եւ մշակութային վայրերը: Նախ միայն կարդացած էի այդ վայրերուն մասին: Իսկ այս տարի կրնամ աչքով տեսնել, ձեռքով դպչիլ, ոտքով քալել... Շատ տպաւորուեցայ Էջմիածինէն, որ առաջին քրիստոնէայ երկրին հոգեւոր կեդրոնն է: Հազար եօթ հարիւրէն աւելի տարիներ հաշուող Էջմիածին, որ ազգերու վերելք ու անկում տեսած է, բազմաթիւ պատերազմներէն վերջ կանգուն մնացած է, չի կրնար ոչ միայն հայու, այլ ուրիշ ժողովուրդներու գաւազն եր ու ն ու շ ա դ ր ու թ ի ն ը չ գրաւել ու հոգին չյուզել:

Ուրիշ մէկ երեւոյթ իմ հոգին փոթորկեց՝ Սուրբ Տիրամայր ճամբարի այցելութիւնը: Այդ ճամբարը կը հանդիսանայ այն տեղը, ուր մարդ կրնայ ինքն իրեն հարցում տալ. «Արդեօք բարեկեցիկ կեանք մը ունի՞մ» կամ «ի՞նչ բան աւելի վեր է, աւելի մեծ է նիւթականէն»: Ի տարբերութիւն մեզի՝ դրամներ, ինքնաշարժներ, զարդարանքներ ուզողներուն, այդ ճամբարի մանուկները միայն մէկ փափաք ունին՝ ծնողք, որոնց սերէն եւ գուրգուրանքէն զրկուած են անոնք: Բայց եւ այնպէս

այսօրուան այդ մանուկները պիտի մեծնան, պիտի սորվին: Ճիշդ է այն տեսակետը, որ անոնցմէ որոշ մաս մը մութ եւ դէպի անդունդ տանող ճանապարհով պիտի քալէ: Բայց ուրիշներ պիտի դիմանան եւ յաջողին: Չէ որ Հայոց Ցեղասպանութենէն ետք վերապրած որբերը ծաղկեցուցին եւ զարգացուցին հայ գաղութները:

Կ'ուզեմ նաեւ նշել, որ ծայր աստիճան յուզուեցայ Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցելելու ժամանակ: Աչքերս ուղղեցի դէպի կրակ եւ հարցումներ մէկ առ մէկ անցան միտքէս. ինչո՞ւ հայ ժողովուրդը այդպիսի դաժան ճակատագիրի արժանացաւ, ինչո՞ւ մէկ ու կէս միլիոն նահատակ տուաւ, ինչո՞ւ պէտք էր չարչարուէր, տարտղնուէր, ցրուէր...

Տակաւին շատ բաներ կ'ուզեմ այս թուղթին յանձնել, բայց ձեռքս ալ չ'երթար գրելու: Կը բաւարարուիմ ըսելով, որ իմ կեցութիւնը Հայաստանի մէջ կը շարունակուի եւ դեռ շատ տպաւորութիւններ պիտի ցնցեն միտքս ու հոգիս:

Ահաւասիկ Համագգայինի հերթական ուսանողական հաւաքը աւարտեցաւ. մասնակիցներէն մեծ մասը արդէն

իր երկիրները վերադարձաւ, բայց քանի մը հոգի տակաւին կը մնան Հայաստանի մէջ եւ կը վայելեն հայրենիքի հոտն ու համը. տասնչորս օրեր մէկ վայրկեանի պէս անցան վերջացան. բայց եւ այնպէս այս ժամանակահատուածը լաւագոյնս եղաւ կեանքիս մէջ. տասնչորս օրերուն մէջ ապրած զգացումները եւ ստացած տպաւորութիւնները շուքի մէջ

ձգեցին իմ կեանքի քսան երեք տարիներու տպաւորութիւնները եւ զգացումները. դժուար է բացատրել այն ապրումները, զորս ունեցած եմ հաւաքի առաջին օրը, երբ հինգ ամիս անհամբեր սպասելէ ետք ի վերջոյ հանդիպեցայ հայրենակից երիտասարդներուն հետ. երանի, որ ամէն մարդ նման բաւարարութիւն զգայ. սկիզբը զար-



մացայ, թե ինչպես տարբեր գաղութներ էկած, այդքան արագ իրարու հետ ծանօթացանք եւ մտերմացանք. բայց աւելի ուշ էկած եմ այն եզրակացութեան, որ մէկ ազգի, հայ ազգի պատկանած ըլլալու իրողութիւնը եւ հայերէնը գլխաւոր ազդակներն են մեր սերտացման:

Ինչ կը վերաբերի հաւաքի ծրագիրին, պիտի խօսիմ վերջին վեց օրերուն մասին, որոնք բովանդակութեամբ պակաս չէին առաջին ութ օրերէն. նախ Օշականի մասին պիտի անդրադառնամ, որ ամենէն տպաւորիչ տեղերէն մին եղաւ ինծի համար. հետաքրքրական բացատրութիւններ ստացանք եռագոյնի, այբուբենի եւ մեր եկեղեցիներու վեղարածէ գմբէներու մասին, այսինքն անոնց հետ կապուած խորհուրդներու մասին. ապա աստիճաններէն իջանք այն տեղը, ուր կը գտնուի հայ Սուրբին, հայ ժողովուրդի գոյատեւումը գիրերու ճամբով ապահոված՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը:

Յաջորդ օր այցելեցինք Մատենադարան, մեր ժողովուրդի հպարտութիւնը, ուր կը պահուին հազարաւոր գրական աղբիւրներ. իմ աչքերովս տեսայ հայերէնով գրուած ամենամեծ եւ ամենափոքր գիրքերը:

Ուղղութեանք՝ հայ պատմութեան մէջ ամենէն փառաւոր եւ պանծալի էջերէն մէկը հանդիսացող՝ դէպի Սարդարապատ. շատ խորհրդաւոր տեղը. աչքերուս առջեւ լայն դաշտ մը բացուեցաւ, որուն վրայ խիստ լռութիւն կը տիրէր եւ միայն հովն է, որ կը խախտէր զայն. եւ մտքիս մէջ երեւակայեցի, թէ ինչպէս իննսուն ութ տարիներ առաջ ճիշդ այդ դաշտի վրայ հայ ժողովուրդի լինելութեան օրհասական կռիւը կը մղուէր. բայց յաղթեցինք, տակաւին կանք ու կ'ապրինք, յաւերժ փառք այդ յաղթանակը կերտած հերոսներուն:

Եւ վերջապէս հասաւ բոլորին կողմէ այդքան սպասուած պահը՝ մեկնում դէպի Արցախ. բայց նախքան Արցախ հասնիլը մենք այցելեցինք Խոր Վիրապ. շատ տպաւորուեցայ, երբ մէկ առ մէկ սանդուխի միջոցով խոր փոս մը իջանք եւ իմ աչքերովս տեսայ այն տեղը, ուր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ իր կեանքի տասն երեք տարիները անցուցած է:

Արցախ մտնելուն պէս անմիջապէս սքանչելի բնութիւնը ուշադրութիւնս գրաւեց. խոր ձորեր, կանաչապատ հովիտներ եւ սեզ լեռներ հիանալի տեսարան կը պարզեն դիտողին առջեւ: Յաջորդ օր այցելութիւններու առումով բաւական հարուստ եղաւ. գացինք Արցախի խորհրդարան, Արցախեան պատերազմի հերոսներու թանգարան, Վազրի Լեռ, Գանձասար, Նիկոլ Դումանի տուն-թանգարան եւ Արցախի զինեալ ուժերու զօրամաս. այս օրը շատ տպաւորիչ եղաւ զինեալ



ուժերու զօրամասին հետ կապուած իմաստալից երեւոյթով. զօրամասին հետ ծանօթացման ժամանակ սպայ-դասախօսը ըսաւ, որ Արցախի զօրանոցներուն մէջ իւրայատուկ սովորութիւն մը կայ, մէկ անկողին ազատ պահել եւ ոչ մէկուն արտօնուի անոր վրայ պառկիլ. այդ անկողինը կը պատկանի Արցախեան ազատամարտի ժամանակ նահատակուած զինուորին. պատեն կախուած է զինուորի լուսանկարը եւ կողքին գրուած են հայ ականջներուն այդքան ծանօթ բառերը՝ յաւերժ փառք. այսպիսով կը դաստիարակեն նորահաս սերունդները եւ միշտ վառ կը պահեն նահատակուած զինուորներուն յիշատակը: Փառք ու պատիւ մեր նահատակներուն:

Վերջին օրը այցելեցինք մեր հերոսներու արիւնով ազատագրուած Շուշիի Սուրբ Ղազանչեցոց սպիտակ եկեղեցի ինչպէս նաեւ Տաթևի ճոպանուղի եւ Տաթևի վանք. եւ ճիշդ Տաթևի մէջ արդէն սկսած ենք իրարու գանգատիլ, որ ֆորումը իր աւարտին կը հասնի, որ պիտի բաժնուինք, հաճելի մթնոլորտը պիտի ընդհատուի. Տաթևէն մինչեւ Երեւան ճամբուն վրայ վերջին անգամ վայելեցինք ընկերային զուարթ մթնոլորտը. եւ ահա ամենէն յուզիչ պահը հասաւ... պիտի բաժնուինք, պիտի հեռանանք հայրենի հողէն. բայց իրարու խոստացանք, որ նորէն պիտի հանդիպինք եւ ֆորումի ընթացքին ստեղծուած կապը չենք խզեր, այլ կը շարունակուի եւ աւելի կ'ամրապնդուի. երանի, որ մեր խոստումներուն տէր կանգնինք:

**Սերժ Սուրատեան
Ռուսիա**

I Vow To Let The World Know About Armenians

I arrived later than the others to Armenia, to join the Hamazkayin forum this year. At first it wasn't easy to mingle with everyone but soon we all got to know each other. I felt amongst friends and colleagues and fellow Armenians who seemed to share the love, history, beauty of our homeland. I can go on and on telling you about the beauty and the history of Garni - Keghart, one of the most sacred churches, about Echmiadzin or the ride atop the beautiful scenery and green pastures, or about the two orphan boys that I met and conspired with them discreetly disposing of the food they did not want to eat and about many other moments when we joked, laughed and sang beautiful songs creating a special bond with everyone.



The words of William Saroyan kept crossing my mind while reflecting on the turmoil happening in Turkey during that time: "I should like to see any power of the world destroy this race, this small tribe of unimportant people, whose wars have all been fought and lost, whose structures have crumbled, literature is unread, music is unheard, and prayers are no more answered. Go ahead, destroy Armenia. See if you can do it. Send them into the desert without bread or water. Burn their homes and churches. Then see if they will not laugh, sing and pray again. For when two of them

meet anywhere in the world, see if they will not create a New Armenia." I thought to myself, they have failed.

Born and raised in America, I speak Armenian, know my history and heritage. Our church has built St. Stephen's Armenian Elementary school where I attended and came to Armenia with my school, then a few years later I returned to Armenia as a member of a beautiful organization Homentmen. This wonderfully organized Forum by Hamazkayin is something I will forever be grateful for and I hope every child or young Armenian had the opportunity that I have had to see Armenia.

I thank Hamazkayin and every person who made this trip a dream come true. We are young Armenians who will grow together and fight for all injustice and crimes committed against our people. Remember Hitler's statement "who remembers the annihilation of the Armenian race", I vow to let the world know about Armenians.

Rubina Vosbigian
USA



Համագգայինի Ֆորումը

Տարիներէ ի վեր կը լսէի Համագգայինի ֆորումի մասին կը փափաքէի մասնակցիլ երիտասարդական այդ հաւաքին:

Այս տարուան քննութիւններու սկիզբը հալէպի համագգայինի գրասենեակէն իմացայ թէ Զրիստին հետ ես ալ պիտի մասնակցիմ համագգայինի ֆորումին:

Լսածս անհաւատալի կը թուէր, ուրախութիւնս անսահման էր. վերջապէս պիտի իրականանար երազս:

Ճշդուած թուականին կը միանանք դամասկոսի մեր անձանօթ ընկերոջ՝ Պէյրուֆի մէջ, մի-

հաջիկին համբերատարութիւնը, ընկ. Վիգէնին խրատներն ու աշխատանքներու բժախնդրութիւնը, ընկի. Փաթիլի ճշդապահանշութիւնն ու աշխատասիրութիւնը, ընկի. Մենարի կարգապահութիւնը:

Վրաս մեծ ազդեցութիւն ձգեց Տիրամայր Հայաստանի ճամբարի այցելութիւնը ծաղկածորի մէջ. այդ փորձիկներուն բուն դիմաւորութիւնը ֆորումականներուն յիշողութենէս պիտի չջնջուի:



Ամբողջ օր մը անցուցինք անոնց հետ եւ այդ օրուան ընթացքին անոնք զգացուցին մեզի, որ մենք իրենց քոյրերն ու եղբայրներն ենք ու իրենցմէ բաժնուիլը դժուար եղաւ բոլորիս համար:

Հետաքրքրական էր Տաթևի վանքը եւ վանքին մօտ գտնուող ճուղանուղիին այցելութիւնը:

Ինչպէս նաեւ անմոռանալի էր դէպի Արցախ երկօրեայ այցելութիւնը, երբ ժամերով ինքնաշարժը քալեց Արցախի գեղեցիկ բնութեան գիրկին մէջէն:

Այդ ճամբու պատկերները դրոշմուած կը մնան յիշողութեանս պատանդին վրայ: Յատկանշական էր մանաւանդ Գանձասարի վանքի այցելութիւնը, ուր անհաշիւ նկարներով կը փորձէինք անմահացնել մեր յիշատակները:

15 օրեր ետք ամենադժուար պահը բաժանումի ժամն էր: Խանդավառ եւ ուրախ տղոց ու աղջիկներուն աչքերը թրջուած, սառած արցունքով զիրար կը դիտէինք... արդեօք կրկին կարելիութիւն պիտի ունենայի՞նք տեսնուելու եւ լիցքաւորելու հայրենի շունչով:

**Կարօ Աւագեան
Սուրիա (Հալէպ)**



ասին օդանաւ կ'ուղղուինք:

Անհամբեր էինք գիտնալու, թէ ո՛ւր պիտի տանին մեզ որո՞նց պիտի հանդիպինք:

Ծանօթացման հանգրուանը սակայն դիւրին անցաւ. 24 ժամ ետք բոլորին հետ հին բարեկամներ էինք:

Ֆորումի ծրագրով հետեւեցանք դասախօսական շարքերու, այցելեցինք Հայաստանի բոլոր տեսարժան վայրերը եւ որպէս տարբեր երկիրներէ հաւաքուած մէկ ընտանիքի զաւակներ՝ միասնաբար ընկերական ջերմ մթնոլորտի մը մէջ վայելեցինք ընկ. Արային հոգատարութիւնը, ընկ. Հրայրին ընկերասիրութիւնը, ընկ.



Համազգայինի Հաւաքը Իմ Մասնակցած Ծրագիրներու Լաւագոյններէն մէկն է

Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Համազգայինի ԱՄՆ Արեւմտեան Շրջանային վարչութեան, որ առիթ ընծայեց ինծի մասնակցելու այս տարուան Համազգայինի ֆորումին, որ կեանքիս ամենահետաքրքրական ու դաստիարակիչ փորձառութիւններէն մէկը հանդիսացաւ՝ հայրենիքի մէջ վայելքի աննախընթաց առիթներ ստեղծելով:

Առաջին անգամը չէր, որ Հայաստան կը գտնուէի եւ ոչ ալ՝ վերջինը: Սակայն, այս անգամ, առաջին անգամ ըլլալով զգացի, որ կը գտնուիմ իմ նախահայրերու հողին վրայ եւ հոն չեմ իբրեւ զբօսաշրջիկ: Կը կարծէի, որ մշակոյթիս մասին ամէն ինչ գիտէի, սակայն իմացայ, որ տակաւին շատ բան ունիմ սորվելիք, եւ այդ հաւաքը նոր դռներ բացաւ առջեւս: Ծանօթացայ հայկական որակաւոր երաժշտութեան, բնաստեղծութեան, ինչպէս նաեւ՝ հայ մշակոյթի եւ քաղաքական կեանքի կարեւորագոյն դէմքերուն:

Հաւաքը նաեւ առիթ հանդիսացաւ, որ մօտէն ծանօթանամ Հայաստանի դիմագրաւած ներկայ հարցերուն, զիս մղելով, որ աւելին կատարեմ Հայաստանի եւ անոր քաղաքացիներու կացութեան բարելաւման համար,



մէջս զօրացնելով ազգային պարտականութեան սկատմամբ գիտակցութիւնը եւ հասկըցնելով ինծի, թէ Հայ դատը միայն Յեղասպանութեան ճանաչման չի վերաբերիր, այլեւ կ'առնչուի մեր հայրենիքին դիմագրաւած ներքին ու արտաքին ամենօրեայ հարցերու լուծման: Ֆորումին շնորհիւ նաեւ գիտակցեցայ, որ աշխարհի տարածքին շատեր նուիրուած են Հայաստանին աջակցելու ջանքերուն:

Նաեւ հոն մտերմացայ աշխարհի չորս կողմերէն ժամանած ուսանողներու, որոնք կարճ միջոցի մը մէջ անծանօթներէ վերածուեցան մօտիկ բարեկամներու, որոնց հետ հաճելի պահեր անցուցիք եւ քննարկեցիք քաղաքական ու մշակութային շարք մը կարեւոր հար-

ցեր: Եթէ առիթը ունենայի, անմիջապէս պիտի ուզէի վերամիանալ անոնց:

Համազգայինի հաւաքը իմ մասնակցած ծրագիրներուն լաւագոյններէն մէկն էր՝ հակառակ իմ ունեցած նախնական վերապահութեան: Միշտ պիտի յիշեմ այս ծրագիրին երկու շաբաթները:


Դարձեալ շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել մասնակցութեանս առիթը ընծայելու ձեր որոշումին համար, եւ կը յուսամ, որ Համազգայինը յառաջիկայ տասնամեակներուն կը շարունակէ այս հաւաքներուն կազմակերպումը:

Սիրով՝

ՎԱՂԱՐՇԱԿ ԱՆԵՏԻՍԵԱՆ

**Վաղարշակ Անետիսեան
ԱՄՆ**





Զօն՝ Համազգայինի Ֆորումին



Յուլիս տասն վեցին ֆորում սկսաւ,
Աշխարհի չորս կողմէն ուսանող բերաւ,
Անոնցմէ շատերը առաջին անգամ
Իր ոտքերը դրած են Մայր Հայաստան:

Համազգայինի առաքելութիւն
Հայ երիտասարդին ջամբել կրթութիւն,
Հայապահպանումի ջախ բոցավառ
Շարունակէք գործ, ձեր վարձքը կատար:

Մեր ծանօթութիւն շատ սահուն անցաւ,
Առաջին օրէն իսկ մենք մտերմացանք,
Ստեղծուած կապերը երբեք չկորսնցնենք
Յարաբերութիւններ պիտի զարգացնենք:

Համազգայինի առաքելութիւն
Հայ երիտասարդին ջամբել կրթութիւն,
Հայապահպանումի ջախ բոցավառ
Շարունակէք գործ, ձեր վարձքը կատար:

Հաւաքի ծրագիր շատ հարուստ եղաւ,
Բայց, ափսոս, շուտով ան իր աւարտը գտաւ,
Մնացած յուշերը հետերնիս տանինք
Մեր ապրած երկիրներ կարօտով լեցունք:

Համազգայինի առաքելութիւն
Հայ երիտասարդին ջամբել կրթութիւն,
Հայապահպանումի ջախ բոցավառ
Շարունակէք գործ, ձեր վարձքը կատար:

Եւ յաջորդ տարիներուն յոյս ունենանք
Նորէն հանդիպելու առիթ ստանանք,
Երանի, մեր հայրենի հողին
Ազատ, անկախ, միացեալ Հայաստանին:

Սերժ Մուրատեան

Գեղեցիկ Փորձառության Մը

Շատ գեղեցիկ փորձառություն մը ապրեցայ, երբ այս ամառ մասնակցեցայ Համագայինի կազմակերպած ուսանողական ֆորումին:

Իմացած ըլլալով ֆորումին հետաքրքրական բնոյթին մասին, անպայման կը փափաքէի մասնակցիլ: Անսահման էր ուրախութիւնս, երբ ծնողքս իմացուցին, թէ



Ճեմարանէն շրջանաւարտ ըլլալու առիթով արդէն իսկ որոշած էին ֆորումի ուղարկել զիս: Լիբանանէն մեկնեցայ չորս պատասխանատուներուն ընկերակցութեամբ: Երեւանի մէջ երկու օրուան ընթացքին արդէն իսկ հասան բոլոր մասնակիցները, որոնք կու գային աշխարհի չորս ծագերէն՝ Ֆրանսա, Ամերիկա (Արեւելեան եւ Արեւմտեան), Կիպրոս, Ռուսիա, Սուրիա, Արցախ, Ջալախք, Հայաստան եւ Լիբանան:

Տասնհինգ օրերու վրայ երկարած մեր աշխատանքներուն ընթացքին հետաքրքրական էր զանազան գաղութներէ եկած, զանազան միջավայրերէ ազդուած հայ երիտասարդներու (ուսանողներու) հետ կարծիքներու փոխանակումը, Հայաստանի եւ

Արցախի պատմամշակութային վայրերու ծանօթացում եւ հայ մշակութային-երաժշտական ու թատերական կեանքի ծանօթացում: Բոլոր այն վայրերը, զորս այցելեցինք, իմ եւ ֆորումական խոր ընկերներու մէջ անելի եւս շեշտեցին հայրենասիրական ոգին եւ պահանջատիրութեան զգացումը: Այդ այցելութիւններուն ընթացքին ունեցանք դաստիարակչական դասախօսութիւններ զանազան մասնագետներու կողմէ:

Ֆորումի վերջին երեք օրերը անցուցինք հզօր Արցախի մէջ: Ապրիլեան անցուդարձերէն ետք այս այցելութիւնը չափազանց յատկանշական եղաւ: Բաժանման պահը շատ դժուար էր: Երկու շաբթուան ընթացքին մեր տխուր եւ ուրախ վայրկեանները իրարու հետ բաժնեցինք, դարձանք մտերիմ ընկերներ ո՛չ միայն իրարու հետ, այլ նաեւ մեր խիստ, բայց բարեացակամ պատասխանատուներուն հետ:

Բաժնուեցանք՝ վերստին մայր հայրենիքի մէջ միանալու (տեսնուելու) խոստումով:



**Ալիք Մեսրոպեան
Լիբանան**

